ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՍՆ-ԳՀԾՁԲ-15/9-17/1

ք. Երևան «27» հունիսի 2017թ.

ՀՀ սփյուռքի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ֆ.Զաքարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Հակոբյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը /առավելագույն գինը/ կազմում է 2772000 (երկու միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սփյուռքի նախարարություն	«Բևեռային ուղի» ՍՊԸ
ք. Երևան, Վ.Սարգսյան 3	ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ.բն.6
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/հ.
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048	Հ/Հ 1510032345990100
ՀՎՀՀ 02705838	ՀՎՀՀ 02228306
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«Դ» հունիսի 2017թ. կնքված
N ՀՀՄՆ-ԳՀՇՁԲ-15/9-17/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

2/2	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	Ձեռքբերվող ծառայության նկարագիր՝		Ձեռքբերվող ծառայության միավորի գին
1	50311120/1	դրամ	HP Compaq DC5800 համակարգչի վերանորոգում՝ ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	մայրական սալիկ socet LGA 775 կամ համարժեքը, (երաշխիք 365 օր)	30000
				պրոցեսոր CPU LGA 775 socet core 2 duo E7200 կամ համարժեքը (երաշխիք 365 օր)	150
				կոշտ սկավառակ SATA 3 500GB (երաշխիք 365 օր)	27000
				կոշտ սկավառակ SATA 3 1TB (երաշխիք 365 օր)	30000
				կոշտ սկավառակ SATA 3 2TB (երաշխիք 365 օր)	42000
				կոշտ սկավառակ SATA 3 3TB (երաշխիք 365 օր)	57000
				կոշտ սկավառակ SATA 3 4TB (երաշխիք 365 օր)	87000
				օպերացիոն հիշող սարք DDR2 2GB/800MHz կամ համարժեքը (երաշխիք 365 օր)	18000
				տեսաքարտ PCI Express GT 640 2GB/DDR3 կամ համարժեքը (երաշխիք 365 օր)	15000
				տեսաքարտ PCI Express GTX 680 2GB/DDR5 կամ համարժեքը (երաշխիք 365 օր)	15000
				հոսանքի սնուցման բլոկ(power supply)	7500
				հոսանքի սնուցման լար(power corde)	1500
				Մայրական սալիկի մարտկոց(BIOS battery)	300
			APC 1500 RBC24 qartridje անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների	Մարտկոց 4 x 12v7a SLA	8100

			փոխարինումը նորով		
			Mercury Smart 1500 անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 2 x 12v/9AH	10500
			Powercom Black Kinght Pro BNT-1500AP անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 12v7.2a	8400
			E-PRO 800 VA անխափան սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մարտկոց 12V 7.5A	8700

	սնուցման սարքի վերանորոգում, ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով		8100
	HP ProLiant DL360 G7 համակարգչի վերանորոգում՝ ներառյալ համալրող սարքավորումների փոխարինումը նորով	Մայրական սալիկ Intel 5520	60000
		Պրոցեսոր Xeon E5620 2.4 GHz(երաշխիք 365 օր)	150
		Օպերացիոն հիշող սարք 4GB/1333 MHz PC3-8500 - 384 GB – registered (երաշխիք 365 օր)	30000
		Կոշտ սկավառակ SAS 146 GB 10K (երաշխիք 365 օր)	126000
	Տպիչ HP laserjet 1505n վերանորոգում	Դիագնոստիկա	1500
		Պրոֆիլակտիկա	2100
		Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը	1500
		Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը	1500
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը	150
		Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը	3000
		Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կարատրոնը	150
	Բազմաֆունկցիոնալ տպիչ MF LaserJet M1522 MFP վերանորոգում	Դիագնոստիկա	1500
		Պրոֆիլակտիկա	2100
		Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը	1500
		Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը	1500
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը	150
		Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը	1500
		Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կարատրոնը	150
		Սկաների լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը	6000
	Տպիչ HP LaserJet P1102 վերանորոգում	Դիագնոստիկա	1500
		Պրոֆիլակտիկա	2100
		Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը	1500
		Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը	1500
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը	150
		Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը	1500
		Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կարատրոնը	150

	Տպիչ HP LaserJet 1018 վերանորոգում	Դիագնոստիկա	1500
		Պրոֆիլակտիկա	2100
		Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը	1500
		Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը	1500
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը	150
		Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը	1500
		Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կարատրոնը	150
	Տպիչ HP LaserJet P2055d վերանորոգում	Դիագնոստիկա	1500
		Պրոֆիլակտիկա	2100
		Թմբուկի փոխարինում նորով ներառյալ թմբուկը	1500
		Տպիչի թերմոժապավենի փոխարինում նորով ներառյալ տպիչի թերմոժապավենը	1500
		Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ թղթի մատուցման ռետինե լիսեռը	150
		Ռետինե լիսեռի փոխարինում նորով ներառյալ ռետինե լիսեռը	1500
		Կարատրոնի փոխարինում նորով ներառյալ կառատրոնը	150
	Սկաներ Sumsung SCX-3400 վերանորոգում	Սկաների լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը	3000
	Սկաներ Xerox DocuMate 632 վերանորոգում	Սկաների լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը	3000
	Պատճենահանող սարք CopyCentre C118 վերանորոգում	Վառարանի փոխարինող նորով ներառյալ վառարանը	150
	Պատճենահանող սարք Canon IR 2018 վերանորոգում	Վառարանի փոխարինող նորով ներառյալ վառարանը	150
	Մոնիտոր Benq E700 17" վերանորոգում	Լամպի փոխարինում նորով ներառյալ լամպը	6000
		Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը	300
		Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում)	6000
	Մոնիտոր Benq E900WD 17" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը	300
		Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը	6000
		Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում ներառյալ մասերը)	300
	Մոնիտոր Optiquest Q201WB 20" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը	300
		Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը	6000
		Վերանորոգում(վնասված մասեր	6000

		փոխարինում ներառյալ մասերը)	
	Մոնիտոր HP 1710 17" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը	300
		Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ մասերը	300
		Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում նորով ներառյալ մասերը)	6000
	Մոնիտոր LG Flatron E2360V-PN 23" վերանորոգում	Լամպի փոխարինում ներառյալ լամպը	300
		Սնուցման բլոկի վերանորոգում կամ փոխարինում նորով ներառյալ սնուցման բլոկը	300
		Վերանորոգում(վնասված մասեր փոխարինում ներառյալ մասերը)	9000
	Notebook HP Probook 4530S վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը	30000
		Օպերացիոն հիշող սարքի՝ 2GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը	600
		Կոշտ սկավառակի՝ SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը	600
		Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 19V 4.74A 90W) նորով ներառյալ սնուցման բլոկը	15000
		Մարտկոցի փոխարինում(Battery 4400mAh 10.8V) նորով ներառյալ մարտկոցը	30000
	Notebook Lenovo G470 վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը	600
		Օպերացիոն հիշող սարքի՝ 2GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը	600
		Կոշտ սկավառակի՝ SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը	33000
		Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 20V-3.25A) նորով ներառյալ սնուցման բլոկը	15000
		Մարտկոցի փոխարինում(Battery 4400mAh 10.8V) նորով ներառյալ մարտկոցը	30000
	Notebook SONY VAIO VGN-NR-498E վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը	600
		Օպերացիոն հիշող սարքի՝ 2GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը	600
		Կոշտ սկավառակի՝ SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը	600
		Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 19.5V-4.7A-90W) նորով ներառյալ սնուցման բլոկը	15000
		Մարտկոցի փոխարինում(Battery 5200mAh 10.8V-11.1V) նորով	30000

		ներառյալ մարտկոցը	
	Notebook Toshiba Satellite A305 վերանորոգում	Մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը	600
		Օպերացիոն հիշող սարքի՝ 2GB/DDR2 փոխարինում նորով ներառյալ օպերացիոն հիշող սարքը	12000
		Կոշտ սկավառակի՝ SATA 3 500 GB փոխարինում նորով ներառյալ կոշտ սկավառակը	600
		Սնուցման բլոկի փոխարինում(Power Supply Laptop 19V 4.74A) նորով ներառյալ սնուցման բլոկը	15000
		Մարտկոցի փոխարինում(Battery 6600mAh 10.8V) նորով ներառյալ մարտկոցը	30000
	Տեսախցիկ Canon EOS 60D	Մարքերի վերանորոգում կամ սարքերի փոխարինում նորով ներառյալ սարքերը	60000
	RAM DDR 3 4GB/1600MHz	Վերանորոգում կամ փոխարինում նորով (երաշխիք 365 օր)	24000

- Նախատեսված ծառայությունների /վերոնշյալ/ ընթացքում օգտագործվող պահեստամասերի և նյութերի տրամադրումը կմատուցվի կատարողի կողմից: Վերանորոգման ենթակա սարքերի տեղափոխումն ու վերադարձն իրականացվում է Պատվիրատուի հաշվեցից: Ծառայության մատուցումը իրականացվում է Պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրվա ընթացքում:

Ծառայության մատուցման սկիզբ՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված՝ Պատվիրատուի կողմից պահանջի ներկայացման օրվանից հաշված 3-րդ աշխատանքային օրվա ընթացքում
Ծառայության մատուցման ավարտ՝ 2017թ դեկտեմբերի 15-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ.բն.6
«Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/ճ.
Հ/Հ 1510032345990100
ՀՎՀՀ 02228306

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«27» հունիսի 2017թ. կնքված
N ՀՀՍՆ-ԳՀԾՁԲ-15/9-17/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120/1	Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների/նախարարության աշխատակազմ/	-	-	-	-	-	-	-	-	-	2525000	2525000	2525000	2525000
		Համակարգչային սարքերի պահպանման և վնորոգման ծառայությունների/նախարարի աշխատակազմ/	-	-	-	-	-	-	-	-	-	247000	247000	247000	247000
ԸՆԴԱՄԵՆԸ															2772000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սփյուռքի նախարարություն
ք. Երևան, Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն
Հ/Հ 900011039030, Հ/Հ 900011039048
ՀՎՀՀ 02705838

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Բևեռային ուղի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 25շ.բն.6
«Արարատբանկ» ԲԲԸ Զարգացում մ/ճ.
Հ/Հ 1510032345990100
ՀՎՀՀ 02228306

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«27» հունիսի 2017թ. կնքված
N ՀՀՄՆ-ԳՀՇՁԲ-15/9-17/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» հունիսի 2017թ. կնքված
N ՀՀՄՆ-ԳՀՄՁԲ-15/9-17/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն